ԼՐԱԲԵՐ
կը տեսնէ Շաբաթ օրերը
Տարեկան բաժնեգին
...իկա և Գանատա $15.00
...աստան $20.00
...աստանան $20.00
...nd Class Postage
... at N. Y., N. Y.

EXP. MARCH 9-79

# ԼՐԱԲԵՐ

... ՏԱՐԻ, ԹԻՒ 9, ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 11, 1938 – 1977

## ՀԱՅՐԵՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԸ ԱՄՆ–ՈՒՄ




### ՓՐՈՖ. ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Օգոստոսի 16-ից 20-ը Թէքսաս նահանգի Լաբբոք քաղաքում կայացաւ Աղի ջրերի ստացման միջազգային կոնֆերանս:

Կոնֆերանսին մասնակցեց Հայաստանի Հողագիտութեան և Ագրոքիմիայի գիտահետազոտական ինստիտուտի դիրեկտոր՝ դոկտոր-պրոֆեսոր Հրանդ Պետրոսեանը:

Նրա զեկուցման թեման էր «Արարատեան դաշտավայրի աղուտ հողերի իւրացման և աղիացած ջրերի օգտագործումը»:

Յարգելի հիւրը մի շարք անգամներ եղել է արտասահմանեան մի շարք երկրներում: Այդ թւում Եգիպտոս, Կուբա, ԱՄՆ 1967-ին, Ֆրանսիա, Հոլանդիա, Անգլիա և շատ ուրիշ երկրներ:

Հրանդ Պետրոսեանը հանդիսանում է ՍՍՀՄ Հողագիտութեան ընկերութեան փոխ-նախագահը, Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի պատուոյ անդամ:

Դոկտոր Պրոֆեսոր Պետրոսեանի գլխաւորութեամբ Հայաստանում ընդամէնը մէկ և կէս տասնամեակ է ինչ սկսուել է: Հողագիտութեան և Ագրոքիմիայի գիտահետազոտական ինստիտուտը, կոլեկտիւի անձնուրաց աշխատանքի շնորհիւ, այժմ Հայաստանում եղած աղուտ հողերը բերրիացում և մշակման պիտանի հողեր են դառնում:

Անուանի հիւրը դէպի Թէքսաս այցելութեան ընթացքին երկու օր մնաց Նիւ Եորք քաղաք, նա եղաւ մի շարք տեսարժան վայրեր, այցելեց ՄԱԿ-ի շէնքը:

Նկարում Պրոֆեսոր Հրանդ Պետրոսեանը ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի դահլիճի մուտքի մօտ:

Լուսանկարը և շարադրանքը՝ ՍԱՐԳԻՍ ՊՕՂՈՍԵԱՆ